Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
Պատասխաններ - 11-12 դասարաններ

1. Քրիստոսի մկրտության տոնն էր:

Հուրախություն հայերի՝ Վասիլ կայսեր ***հրամանով*** ջրօրհնեքը կատարելու էր կաթողիկոս Պետրոս Արշարունին, որից հետո՝ հունաց պատրիարքը: Ահա քրքումնաթույր **թիկնօթոցն** ուսերին՝ առաջ եկավ հայրապետը՝ ***ակնեղենով*** ընդելուզված սկիհը ձեռքին, և սրբազան մյուռոնը թափվեց գետը, ապա սուրբ խաչը ***երիցս*** ընկղմեց օրհնված ջրի մեջ:

Ո՜վ հրաշք. գետի՝ արևից շողարձակող ալիքներին յոթներանգ ցնցուղներ հայտնվեցին, ու ներկաներին թվաց՝ ջուրն սկսեց հետ հոսել:

- Գետը հե՜տ դարձրեց,- գոչեց ամբոխը՝ աչքերն անքթիթ հառելով ալիքներին:

Արտասովորը, թեկուզև մտացածին, զորավոր է: Եվ ***այստեղ***՝ Ալրագետի ափին, մարդը դարձավ ***առասպելաստեղծ***՝ համոզելով ինքն իրեն և այլոց՝ իբր կաթողիկոսն այնքան բարեպաշտ է, որ կարողացավ փոխել գետի ընթացքը. ասում են՝ այդ դիպվածից հետո կաթողիկոսին հորջորջեցին «*Գետադարձ*» :

Իրականում ոչ մի հրաշք էլ չէր եղել. մյուռոնը (այն պատրաստվում է անուշահոտ յուղերից ու ծաղիկներից) սառը ջրում վերածվել էր գունագեղ կաթիլների, որ ալիքների հոսքին հակընթաց ***քամուց*** ստեղծել էին պատրանք, թե գետը փոխեց հունը:

Հայերի համար, սակայն, կատարվածը առ ոչինչ էր. հանձին կաթողիկոսի՝ նրանց առաջ կանգնած էր միայն ***արգահատանքի*** արժանի ողորմելի մի ազգուրաց. օրերս նա յուր **ձեռամբ** ստորագրել էր Անին հույներին ***հանձնելու*** վավերագիրը և հիմա հպարտ նայում էր ամբոխին՝ նույնիսկ չփորձելով հերքել իրեն վերագրվող թվացյալ հրաշքը:

Հետագայում ո՜չ զղջումը, ո՜չ ապաշխարողի քուրձը ի զորու չեղան փրկելու հայրենադավ կաթողիկոսին:

Կա անկապտելի ճշմարտություն. ժողովուրդը երբեք չի ներում դավաճաններին:

2. ի ուրախություն- հուրախություն, գետում-գետը, խաչն-խաչը, հառնելով-հառելով, ինքնիրեն- ինքն իրեն, փոխելու- փոխել, ստեղծել էր-ստեղծել էին, հանձինս-հանձին, հպարտ կերպով- հպարտ, փրկել-փրկելու

3. **տեսիլք**-պատրանք, **արտասովոր**-անհեթեթ, **երևակայական**-մտացածին, **թշվառ-** ողորմելի, **ակնապիշ**-անքթիթ, **անգամ**-նույնիսկ, **դեղնավուն**-քրքումնաթույր, **անկողոպտելի**-անկապտելի, **խորշանք**-արգահատանք, **ազուցել**-ընդելուզել

4. **հրամանով**-հիմունքի պար, **թիկնօթոցն**-ուղիղ խնդիր, **ակնեղենով**-ներգործող խնդիր, **երիցս**-չափի պար. **այստեղ**-տեղի պար, **առասպելաստեղծ**-ստորոգելի, **քամուց**-պատճառի պար. **արգահատանքի**-հանգման խնդիր, **ձեռամբ**- միջոցի խնդիր, **հանձնելու**-որոշիչ

7. առ ոչինչ, այլոց, հունաց, յուր, հանձինս, հուրախություն, երիցս, ձեռամբ, թվացյալ, ի զորու, կայսեր:

Գնահատման չափանիշներ- 11-12-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Բնագրի ճիշտ կետադրության համար՝ 5 միավոր:
   Կետադրական կանոնին վերաբերող յուրաքանչյուր ոչ ճիշտ նշանի դեպքում հանվում է 0,5 միավոր:

2.Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:

3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:

4.Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:

5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:

6.Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր.
Նախադասության համար՝ 0,5, շարահյուսական պաշտոնը՝ 0,5 միավոր:

7.Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:

8. .Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար՝ 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր, շարադրության ծավալը չապահովելու համար՝ 0,5 միավոր: